ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
2016 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

ԲԱԺԻՆ 1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը 3

ԲԱԺԻՆ 2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները 5

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները 5

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները 7

ԲԱԺԻՆ 3. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները 8

3.1. Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ..... 8

3.2. Երևան ՀԷԿ 1-ի վերազինման աշխատանքներ..... 8

3.3. Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ 10

ԲԱԺԻՆ 4. Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը..... 11

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը..... 11

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 13

Եզրակացություններ.....15

Հղումներ օգտագործված նյութերին 16

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2017 թվականի աշխատանքային ծրագրի 20-րդ կետի **[Որոշում 1]** և արտացոլում է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ ընկերություն) 2014-2018 թվականների ներդրումային ծրագրի 2016 թվականի հատվածի (այսուհետև՝ ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2014-2018 թվականների ներդրումային ծրագիրը **[Որոշում 2, Որոշում 3]** և փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին լիցենզավորված ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունը **[Հաշվետվություն]**:

ԲԱԺԻՆ 1.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2016 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել ընկերությանը պատկանող ՀԷԿ-երի վերականգնման և վերազինման, էլեկտրատեխնիկական սարքավորումների արդիականացման, հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական և օժանդակ սարքավորումների փոխարինման և շենքերի, շինությունների վերակառուցման նպատակով: Ներդրումներ էր նախատեսվում իրականացնել նաև ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ մեքենաների, ՀԷԿ-երի անվտանգ

աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների, տնտեսական բնույթի սարքավորումների, գործիքների, լիցենզավորված ծրագրերով համալրված համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների, գրասենյակային կահույքի, հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների ձեռքբերման ուղղությամբ:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային ծրագրով նախատեսված էր իրականացնել 14 712,1[1] մլն դրամի ներդրումներ, որից.

- «Հրազդան» ՀԷԿ-ի վերազինում՝ 65,1 մլն դրամ,
- «Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-ի վերականգնում՝ 14 573,2 մլն դրամ,
- ընկերության աշխատանքների կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 73,8 մլն դրամ:

Ստորև՝ գրաֆիկ 1-ում, ներկայացված է ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ նպատակային ուղղությունների:

Գրաֆիկ 1



[1] Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն, բացառությամբ մարդատար մեքենաների ձեռքբերման գումարների:

Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից ներդրումների մեծ մասը՝ 7 023,2 մլն դրամ, նախատեսվում էր ուղղել հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական և օժանդակ սարքավորումների փոխարինմանը, իսկ ՀԷԿ-երում էլեկտրատեխնիկական սարքավորումների վերականգնման և փոխարինման համար՝ 5 601,4 մլն դրամ:

Համաձայնեցված ներդրումներից 2 087,5 մլն դրամը նախատեսված էր ռելեական պաշտպանության սարքավորումների, հեռահաղորդակցման համակարգի արդիականացման, շենքերի և շինությունների վերականգնման և այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումների նպատակով:

ԲԱԺԻՆ 2.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն Հաշվետվության՝ ընկերությունը 2016 թվականի ընթացքում կատարել է 14 247,9 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում ավարտվել են 14 199,5 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 48,4 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի իրականացված և ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ		
					2016թ.	2016թ. սկզբի դրությամբ (մնացորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
1	Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	65.1	65.1	100%	65.1	-	65.1
2	Երևան ՀԷԿ-1-ի վերականգնում	14 573.2	14 068.4	97%	13 056.4	1 060.3	14 116.8
3	Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	73.8	66.0	89%	66.0	-	66.0
	Ընդամենը	14 712.1	14 199.5	97%	13 187.5	1 060.3	14 247.9

Աղյուսակ 1-ից երևում է, որ ընկերությունը ներդրումային ծրագիրը կատարել է 96%-ով: Նշվածն առավել հանգամանալից ներկայացված է Բաժին 3-ում:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Ավարտված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	1 060.3	7%	1 060.3	7%
2	Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից	12 427.5	87%	12 381.1	87%
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	52.9	0%	52.9	0%
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներից	707.2	5%	705.2	5%
4.1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	-			
4.2	*նյութական ծախսումներ*	-			
4.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	-			
4.4	*նախագծային աշխատանքներ*	187.7		187.7	
4.5	*այլ*	519.5		517.5	
	ԸՆԴԱՄԵՆԸ	14 247.9		14 199.5	

Աղյուսակ 2-ից երևում է, որ Ընկերության կողմից 2016 թվականին ավարտված աշխատանքների 87%-ն իրականացվել է կապալառու կազմակերպությունների կողմից: Ավարտվել են ներդրումային ծրագրով

համաձայնեցված աշխատանքների իրականացմանն ուղղված նախորդ տարիներին իրականացված 1 060,3 մլն դրամի աշխատանքներ:

ԲԱԺԻՆ 3.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

Ստորև, առավել հանգամանալից, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2016 թվականին իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

3.1. Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

«Հրազդան» ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ 2016 թվականին համաձայնեցված էր 65,1 մլն դրամ՝ էլեկտրատեխնիկական սարքավորումների փոխարինման նպատակով: Մասնավորապես, նախատեսվում էր փոխարինել 10 կՎ դողային կամրջակը: Նշված աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել:

3.2. Երևան ՀԷԿ 1-ի վերականգնման աշխատանքներ

«Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-ի վերականգնման ուղղությամբ 2016 թվականին համաձայնեցված էր 14 573,2 մլն դրամ հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական, օժանդակ սարքավորումների փոխարինման և վերականգնման, էլեկտրատեխնիկական սարքավորումների փոխարինման և արդիականացման, ռելեական պաշտպանության սարքավորումների արդիականացման, ԳԱԿՀ (գործընթացների ավտոմատ կառավարման համակարգ) հեռահաղորդակցման համակարգերի, ինչպես նաև շենքերի և շինությունների վերակառուցման ուղղությամբ:

«Հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական, օժանդակ սարքավորումներ» ենթաուղղությամբ 2016 թվականին համաձայնեցված էր 7 023,2 մլն դրամ հիդրավլիկ տուրբինների, տուրբինների արագության կարգավորիչի

փոխարինման, կոմպրեսորի և դրենաժային համակարգի փոխարինման նպատակով, ինչպես նաև տեխնիկական ջրամատակարարման համակարգի վերակառուցման և հեռացնող ջրանցքի վահանների հիմնանորոգման համար: Այս ուղղությամբ փաստացի իրականացվել են 6 916,9 մլն դրամի ներդրումներ, որոնք ավարտվել են:

«էլեկտրատեխնիկական սարքավորումներ» ենթաուղղությամբ 2016 թվականին համաձայնեցված էր 5 536,3 մլն դրամ՝ ՀԷԿ-ի գեներատորների և գրգռման համակարգերի արդիականացման, 28 հատ 6 կՎ բջիջների փոխարինման, ակումուլյատորային մարտկոցի լիցքավորման ագրեգատի, ինչպեսև հաստատուն և փոփոխական հոսանքի ցածրավոլտ սարքավորումների (բաշխիչ վահանների) փոխարինման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 5 451,0 մլն դրամի ներդրումներ, որոնք ավարտվել են:

Բացի վերը նշվածը, Ընկերության Հաշվետվության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ծավալներում ներառված են էլեկտրական սարքավորումների պահեստամասերի, ինչպես նաև լաբորատոր սարքավորումների մատակարարաման նպատակով իրականացված 48,4 մլն դրամ արժեքով ներդրումներ, որոնք անավարտ են:

«Ռելեական պաշտպանության սարքավորումներ» ենթաուղղությամբ 2016 թվականին համաձայնեցված էր 692,3 մլն դրամ՝ ՀԷԿ-ի հիդրոագրեգատների պաշտպանության, ավտոմատիկայի և ղեկավարման համակարգի արդիականացման նպատակով: Այս ուղղությամբ փաստացի իրականացվել են 777,7 մլն դրամի ներդրումներ:

«Շենքեր, շինություններ» ենթաուղղությամբ 2016 թվականին կայանային հանգույցի շենք և շինությունների վերակառուցման ուղղությամբ համաձայնեցված էր 1 242,1 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 922,8 մլն դրամի ներդրումներ, որոնք ավարտվել են:

3.3. Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ

Ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով 2016 թվականին համաձայնեցված էր 73,8 մլն դրամ մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման, ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների, տնտեսական բնույթի սարքավորումների, հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների, գրասենյակային կահույքի, լիցենզավորված ծրագրերով համալրված համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների, բջջային հեռախոսների ձեռքբերման նպատակով:

«Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում» ենթաուղղությամբ 2016 թվականին նախատեսվում էր 43,5 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռք բերել 5 մարդատար մեքենաներ: Նշված ձեռքբերումն իրականացվել է ամբողջ ծավալով:

«ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ» 2016 թվականին համաձայնեցված էր 10,9 մլն դրամ շարժիչների, պոմպերի, ներանցիչների, ամբարձիչների, վերհան հարթակների ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել 1,3 մլն դրամի սարքավորումներ:

«Տնտեսական բնույթի սարքավորումների ձեռքբերման ենթաուղղությամբ» համաձայնեցված էր 3,0 մլն դրամ: 2016 թվականին փաստացի ձեռք են բերվել 3,8 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Լիցենզավորված ծրագրերով համալրված համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում» ենթաուղղությամբ 2016 թվականին համաձայնեցված էր 4,0 մլն դրամ համապատասխան ծրագրերով հագեցած նոր համակարգիչների, համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել 3,5 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Գրասենյակային կահույքի ձեռքբերում» 2016 թվականին համաձայնեցված էր 9,0 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել 0,2 մլն դրամ ընդհանուր արժեքով հիմնական միջոցներ:

«Հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների ձեռքբերման ուղղությամբ» 2016 թվականին համաձայնեցված էր 3,0 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել 13,8 մլն դրամի սարքավորումներ և գործիքներ:

Մյուս ենթաուղղություններով ներդրումներ չեն իրականացվել:

ԲԱԺԻՆ 4.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

2016 թվականի ընթացքում Ընկերության կողմից փաստացի ավարտված 14 199,5 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. Ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացված գնումների արդյունավետությունը գնահատելու նպատակով իրականացվել է ընկերության կողմից ձեռքբերված ապրանքների և իրականացված աշխատանքների գնային վերլուծություն: Գների մոնիթորինգը ցույց է տալիս, որ ապրանքների ու սարքավորումների գները որոշ դեպքերում գերազանցում են շուկայականը: Մասնավորապես, շուկայական գների ուսումնասիրության արդյունքում 384,1 մլն դրամ նվազեցվել է էլեկտրատեխնիկական և տնտեսական բնույթի սարքավորումների ձեռքբերման ենթաուղղությունից: Սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում էլեկտրատեխնիկական սարքավորումների փոխարինման, շենքեր և շինությունների վերակառուցման ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցվել է 652,9 մլն դրամ: Նվազեցված ծավալներում ներառված 6 կՎ բջիջների փոխարինման աշխատանքների, որոնց սկզբնական փաստաթղթերն Ընկերությունը չի ներկայացրել:
2. №№1,2 գեներատորների և գրգռման համակարգերի արդիականացման ուղղությամբ ներկայացված սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 786,1 մլն դրամ ծավալով ներդրումները

նույնպես նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

3. 2016 թվականին իրականացված՝ ավարտված աշխատանքների ուղղությամբ կապիտալացվել են 510,0 մլն դրամի այլ ծախսումներ, որից 310,5 մլն դրամը վարկի տոկոսներ, իսկ 199,5 մլն դրամը՝ գործուղման ծախսեր: Հարկ է նշել, որ ներդրումների նպատակով ներգրավված ֆինանսական միջոցների սպասարկման ծախսերի սակագնով փոխհատուցման հարցն արդեն իսկ կարգավորված է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 12-ի №15Ա որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով, համաձայն որի ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումների արդյունքում ավարտված հիմնական միջոցների մնացորդային արժեքի նկատմամբ յուրաքանչյուր տարի կկիրառվի 10 տոկոս շահույթի նորմա՝ մինչև հարկումը: Ինչ վերաբերում է գործուղմանն ուղղված ծախսերին, վերջիններն ներառված են ընկերության շահագործման և պահպանման ծախսերում, և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

4. Հաշվետվության ուսումնասիրության արդյունքում 111,5 մլն դրամի ներդրումներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախապես համաձայնեցված չլինելու պատճառով:

5. Իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 64,8 մլն դրամով, որը ևս նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից հետևյալ ենթաուղղություններով.

- ռելեական պաշտպանության սարքավորումների ՝ 54,0 մլն դրամ,
- հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների ձեռքբերում՝ 10,8 մլն դրամ:

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ Ընկերության կողմից 2016 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է ստորև՝ աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3
մլն դրամ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի սակագնով փոխհատուցման ենթակա 2016 թվականի ներդրումների ծավալի ամփոփ վերլուծությունը

1	**Իրականացված ներդրումներ**	**14 247.9**
2	**Անավարտ աշխատանքներ**	**48.4**
3	**2016 թվականի ընթացքում ավարտված աշխատանքներ**	**14 199.5**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**2 509.2**
4.1	Գների մոնիթորինգի արդյունքում ապրանքների և ծառայությունների արժեքներից նվազեցում	1 823.0
4.1.1	Սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում	652.9
4.1.2	Շուկայական գների ուսումնասիրության արդյունքում	384.1
4.1.3	Գեներատորների և գրգռման համակարգերի արդիականացման ուղղությամբ իրականացված ներդրումներից	786.1
4.2	Վարկի սպասարկման տոկոսներ	510.0
4.3	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումներ	111.5
4.4	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումները գերազանցող ներդրումներ	64.8
5	**2016 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներ**	**11 690.3**

Եզրակացություններ

Ամփոփելով Ընկերության ներդրումային գործունեության արդյունքները նշենք, որ 2016 թվականի ներդրումային ծրագիրն իրականացվել է 96%-ով: Հաշվետու ժամանակահատվածում ավարտված ներդրումների ծավալը կազմել է 14 199,5 մլն դրամ:

2016 թվականին իրականացված ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմում է 11 690,3 մլն դրամ:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի №339Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».

Որոշում 2 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 12-ի №15Ա որոշումը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2014-2018 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».

Որոշում 3 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 6-ի №520Ա որոշումը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2014-2018 թվականների ներդրումային ծրագրում ճշգրտումներ կատարելու մասին».

Հաշվետվություն - «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2016 թվականին փաստացի կատարված կապիտալացվող և ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումների վերաբերյալ ընկերության 2017 թվականի ապրիլի 6-ի №2/9-026 գրությամբ ներկայացված հաշվետվությունը: